ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-7/68-1

ք. Երևան 31.08. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պժկ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս.Հայրապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար/հավելված N 2/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **40 օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **40 օրից** ավելի,

2.1.8 Զնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 27068485 (քսանյոթ միլիոն վաթսունութ հազար չորս հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Կոտայքի մարզ, գյուղ Զովունի
աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2473700214350000
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 03300526
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի մետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-7/68-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Ապրանքի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1	խոհանոցային սպասք /Շերեփ փոքր ալյումինե/	Շերեփփոքրալյումինե՝ A0 մակնիշների, ԳՕUS 17151-81: Բռնակիերկարությունը 236մմ +/-5մմ, շերեփիխորությունը 50մմ +/-2մմ, տրամագիծը 108մմ +/-2մմ, մետաղիհաստությունը 4-4,5մմ: ՇերեփիներըփաթեթավորվածթղթովԳՕUS 8273-75: Յուրաքանչյուրփաթեթում 20 հատ: Փաթեթներըտեղադրվածստվարաթղթեարկղում, յուրաքանչյուրարկղում 2 փաթեթ: Արկղըպիտակավորված: Պիտակիչափը 150մմX200մմ +/-2%: Պիտակիվրամակնանշված՝ արտադրվածէՀՀՊՆկարիքներիհամար, վաճառքիենթակաչէ, արտադրողմատակարարկազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքիանվանումը, քանակը, արտադրությանամիսըևտարին: Ապրանքիհանձնմանժամանակպետքէհետըներկայացվիլիցենզավորվածկազմակերպությանկողմիցտրամադրվածորակիսերտիֆիկատ, ինչպեսնաևսերտիֆիկատմետաղիբաղադրությանվերաբերյալ:
2	կաթսաներ /Կաթսա 4լ. ալյումինե առանց կափարիչ/	Կաթսա 4լ. ալյումինե՝ A0 մակնիշների, ԳՕUS 17151-81, առանցկափարիչ՝ խորությունը 100-105մմ, վերինմասիարտաքինտրամագիծը 275-277մմ, մետաղիհաստությունըոչպակաս 3մմ, հիմքիտրամագիծը 220-222մմ, երկուբռնակով, յուրաքանչյուրը 70-80մմ x 30-40մմ, կաթսանևբռնակըմեկամբողջական: Կաթսայիալյումինեբռնակիվրա 2 հատգամերովամրացվածպոլիպրոպիլենեմեկուսիչշերտ:Կաթսայիկողայինհատվածումարտաքինշերտիկողմիցռելեֆայինմակնանշումով՝ արտադրողկազմակերպությանապրանքայինինշանը, տարողությունը: ՅուրաքանչյուրկաթսանփաթեթավորվածթղթովԳՕUS 8273-75: Փաթեթավորվածկաթսանտեղադրվածստվարաթղթեարկղում: Յուրաքանչյուրարկղում 4 հատկաթսա: Արկղըպիտակավորված: Պիտակիչափը 150մմX200մմ +/-2%: Պիտակիվրամակնանշված՝ արտադրվածէՀՀՊՆկարիքներիհամար, վաճառքիենթակաչէ, արտադրողմատակարարկազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքիանվանումը, քանակը, արտադրությանամիսըևտարին: Ապրանքիհանձնմանժամանակպետքէհետըներկայացվիլիցենզավորվածկազմակերպությանկողմիցտրամադրվածորակիսերտիֆիկատ, ինչպեսնաևսերտիֆիկատմետաղիբաղադրությանվերաբերյալ:
3	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումինե առանց կափարիչի/	Կաթսա 6լ. ալյումինե՝ A0 մակնիշների, ԳՕUS 17151-81, առանցկափարիչ՝ խորությունը 128մմ +/-5մմ, վերինմասիարտաքինտրամագիծը 277մմ +/-5մմ, մետաղիհաստությունըոչպակաս 3մմ, հիմքիտրամագիծը 222մմ +/-5մմ, երկուբռնակով, յուրաքանչյուրը 70-80մմ x 30-40մմ +/- 2մմ, կաթսանևբռնակըմեկամբողջական: Կաթսայիալյումինեբռնակիվրա 2 հատգամերովամրացվածպոլիպրոպիլենեմեկուսիչշերտ: Կաթսայիկողայինհատվածումարտաքինշերտիկողմիցռելեֆայինմակնանշումով՝ արտադրողկազմակերպությանապրանքայինինշանը, տարողությունը: Մակնանշմանբարձրությունը 5-8մմ: ՅուրաքանչյուրկաթսանփաթեթավորվածթղթովԳՕUS 8273-75: Փաթեթավորվածկաթսանտեղադրվածստվարաթղթեարկղում: Յուրաքանչյուրարկղում 4հատկաթսա: Արկղըպիտակավորված: Պիտակիչափը 150մմX200մմ +/-2%: Պիտակիվրամակնանշված՝ արտադրվածէՀՀՊՆկարիքներիհամար, վաճառքիենթակաչէ, արտադրողմատակարարկազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքիանվանումը, քանակը, արտադրմանամիսըևտարին: Ապրանքիհանձնմանժամանակպետքէհետըներկայացվիլիցենզավորվածկազմակերպությանկողմիցտրամադրվածորակիսերտիֆիկատ, ինչպեսնաևսերտիֆիկատմետաղիբաղադրությանվերաբերյալ:
4	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումինե առանց կափարիչի/	Կաթսա 8լ. ալյումինե՝ A0 մակնիշների, ԳՕUS 17151-81, առանց կափարիչ՝ խորությունը 160մմ +/-5մմ, վերին մասի արտաքին տրամագիծը 277մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 3մմ, հիմքի տրամագիծը 222մմ +/-5մմ, երկու բռնակով, յուրաքանչյուրը՝ 70-80մմ x 30-40մմ,+/-2մմ, կաթսան և բռնակը մեկ ամբողջական մետաղից: Կաթսայի ալյումինե բռնակի վրա 2 հատ գամերով ամրացված պոլիպրոպիլենե մեկուսիչ շերտ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով՝ արտադրող կազմակերպության ապրանքային նշանը, տարողությունը: Մակնանշման բարձրությունը 5-8մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕUS 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
5	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 6լ. ալյումինե, կափարիչով, A0 մակնիշների, ԳՕUS 17151-81, կաթսան 22 համարի, կաթսայի տրամագիծը 220-222մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 1,5մմ, կափարիչի հաստությունը ոչ պակաս 1մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2% և 35մմ+/-2% հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 95մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Տարողության տեսակը <<Խորը>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով՝ արտադրող կազմակերպության ապրանքային նշանը, տարողությունը, <<ՊՆ>>: <<ՊՆ>> մակնանշման բարձրությունը 5-8մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕUS 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:

6	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 8լ. ալյումինե, կափարիչով, A0 մակնիշների, ԳՕՍՏ 17151-81, կաթսան 24 համարի, կաթսայի տրամագիծը 240-242մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 1,5մմ, կափարիչի հաստությունը ոչ պակաս 1,5մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2% և 35մմ+/-2% հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 95մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Տարողության տեսակը <<Խորը>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով արտադրող կազմակերպության ապրանքային նշանը, տարողությունը, <<ՊՆ>>: <<ՊՆ>> մակնանշման բարձրությունը 5-8մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
7	կաթսաներ /Կաթսա 10լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 10լ. ալյումինե, կափարիչով A0 մակնիշների, ԳՕՍՏ 17151-81, կաթսան 26 համարի, կաթսայի տրամագիծը 260մմ, +/-2մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 1,5մմ, կափարիչի հաստությունը ոչ պակաս 1,5մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2% և 35մմ+/-2% հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 115մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Տարողության տեսակը <<Խորը>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով՝ արտադրող կազմակերպության ապրանքային նշանը, տարողությունը <<ՊՆ>>: <<ՊՆ>> մակնանշման բարձրությունը 5-8մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
8	կաթսաներ /Կաթսա 20լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 20լ. ալյումինե, կափարիչով, A0 մակնիշների, ԳՕՍՏ 17151-81, կաթսան 20 համարի, կաթսայի տրամագիծը 340մմ +/-2մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 3մմ: Կափարիչի հաստությունը ոչ պակաս 1,5մմ: Երկու բռնակով՝ պատրաստված ալյումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 30մմ+/-2% և 50մմ+/-2% հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 130մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Փ6մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ:Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով՝ արտադրող կազմակերպության ապրանքային նշանը, տարողությունը <<ՊՆ>>: <<ՊՆ>> մակնանշման բարձրությունը 5-8մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
9	կաթսաներ /Կաթսա 40լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 40լ. ալյումինե, կափարիչով, A0 մակնիշների, ԳՕՍՏ 17151-81, կաթսան 40 համարի, կաթսայի տրամագիծը 440մմ +/-2մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 3մմ: Կափարիչի հաստությունը ոչ պակաս 1,5մմ: Երկու բռնակով՝ պատրաստված ալյումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 45մմ+/-2% և 65մմ+/-2% հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 140մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Փ10մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 80մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով՝ արտադրող կազմակերպության ապրանքային նշանը, տարողությունը <<ՊՆ>>: <<ՊՆ>> մակնանշման բարձրությունը 5-8մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:

10	խոհանոցային սպասք /Տակդիր ալյումինե/	Տակդիր ալյումինե A0 մակնիշի, տեսքը շրջանաձև տրամագիծը 175մմ +/-5մմ կամ քառակուսի 175X175մմ +/-5մմ, նախատեսված է սեղանների վրա տաք վիճակում մատուցվող 8լ-ոց, 6լ-ոց, 4լ-ոց կաթսաների, թեյնիկի տակ դնելու համար, մետաղի հաստությունը ոչ պակաս 2մմ, յուրաքանչյուր մակերեսից դուրս եկած 4 հատ ելուստ: Մի մակերեսի ելուստները դասավորված շրջանագծի առանցքով՝ ուղղահայաց և հորիզոնական, մյուս մակերեսի վրա դուրս եկած ելուստները դասավորված շրջանաձև: Ելուստի բարձրությունը 8մմ +/-1մմ, երկարությունը 73 մմ +/-2մմ: Տակդիրները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված տակդիրները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 50հատ: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
11	դույլ, ցինկապատ /Դույլ ցինկապատ/	Դույլ 12լ. ԳՈՍՏ 20558-82, պատրաստված ցինկապատ բարակաթերթ մետաղական թիթեղից, տարողությունը 12լ. թույլատրելի շեղումը +/- 4%, մետաղի հաստությունը ոչ պակաս 0,35մմ, մետաղյա բռնակով: Բռնակի հաստությունը ոչ պակաս Փ4մմ: Դույլի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով՝արտադրող կազմակերպության ապրանքային նշանը, տարողությունը: Մակնանշման բարձրությունը 5-8մմ: Դույլը փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75, դասավորված 10 հատով մեկը մյուսի մեջ: Փաթեթավորված 10 հատ դույլերը տեղադրված ստվարաթղթե արկղում: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
12	խոհանոցային սպասք /Շերեփ խոհարարի ալյումինե /	Շերեփ խահարարի ալյումինե A0 մակնիշների, ԳՕՍՏ 17151-81: Տեսքը գնդաձև, տրամագիծը 181մմ +/-5մմ, բարձրությունը 86մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 4մմ, բռնակը փայտյա, փայտի տեսակը՝ չամ կամ լորենի: Բռնակի երկարությունը 1100մմ +/-100մմ, տրամագիծը 32մմ +/-5մմ: Շերեփները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Շերեփի գլխիկները միմյանցից առանձնացված փաթեթավորման թղթով: Փաթեթավորված շերեփները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 5 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
13	խոհանոցային սպասք /Փլավ քամիչ ալյումինե/	Փլավ քամիչ ալյումինե՝ A0 մակնիշների, ԳՕՍՏ 17151-81, տեսքը կիսագնդաձև, տրամագիծը 305մմ +/-5մմ, բարձրությունը 185մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 2մմ: Քամիչի վերին եզրային մասից 2-ից 4մմ հետ ծալված դեպի արտաքին շերտը և սեղմված դեպի հիմքը: Քամիչի վերին եզրային մասից 50մմ +/-3մմ դեպի ներքև ամբողջ մակերեսով անցքեր, անցքի տրամագիծը 2,5- 4մմ: Անցքերի հեռավորությունը միմյանցից 10-12մմ:Քամիչը երկու բռնակով՝ մեծ և փոքր: Մեծ բռնակի երկարությունը 305մմ +/-5մմ, լայնությունը 45մմ +/-5մմ, հաստությունը ոչ պակաս 3մմ, ամրացված հիմքին 3հատ ոչ պակաս 4մմ հաստության ալյումինե գամերով: Բռնակը ուղղագիծ առանցքով ռելիեֆային ամրություն ապահովելու համար: Փոքր բռնակի երկարությունը 55մմ +/-5մմ, լայնությունը 45մմ +/-5մմ, հաստությունը ոչ պակաս 3մմ, ամրացված հիմքին 3հատ ոչ պակաս 4մմ հաստության գամերով: Քամիչները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված քամիչները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 10 հատ:Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
14	խոհանոցային սպասք /Քափկիր չ/պ/	Քափկիր ԳՕՍՏ Ի 51687-2000, չժանգոտվող պողպատից AISI 304 մակնիշի: Բռնակի երկարությունը 400մմ +/-5մմ, լայնությունը ոչ պակաս 20մմ, աշխատող մասի տրամագիծը ոչ պակաս 100մմ, հաստությունը ոչ պակաս 1մմ: Աշխատող մասի ամբողջ մակերեսով անցքեր, անցքի տրամագիծը 2,5-4մմ: Անցքերի հեռավորությունը միմյանցից 4-8մմ:Բռնակը ուղղագիծ առանցքով ռելիեֆային, ամրություն ապահովելու համար: Քափկիրի բռնակի վրա դարձերեսային մասում ռելիեֆային մակնանշումով դրոշմավորված՝ <<Չժանգոտվող պողպատ>> գրառումը: Մակնանշման բարձրությունը 5-8մմ: Քափկիրը փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված քափկիրները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 50 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX20մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, մատակարար կազմակերպության անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, մատակարարման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
15	դանակներ /Դանակ <խոհարարի եղյակ>/	Դանակ խոհարարի եղյակ, ԳՕՍՏ Ռ 51015-97, բաղկացած 3 հատ տարբեր չափերի դանակներից: Մեծ դանակի երկարությունը 325-360մմ, կտրող սայրի երկարությունը 205-245մմ, սայրի լայնությունը 18-52մմ, սայրի հաստությունը 1-4,5մմ, միջին դանակի երկարությունը 285-320մմ, կտրող սայրի երկարությունը 176-205մմ, սայրի լայնությունը 16-40մմ, սայրի հաստությունը 1-2,4մմ, փոքր դանակի երկարությունը 205-240մմ, կտրող սայրի երկարությունը 100-140մմ, սայրի լայնությունը 15-30մմ, սայրի հաստությունը 0,7-2,2մմ: Մետաղը ՈՒ8Ա մակնիշի: Դանակները հավասարաչափ սրված, սրված անկյունը ոչ ավել 40 աստիճան: Սայրը պետք է օժտված լինի առաձգականությամբ և ունենա կարծրություն ոչ պակաս HRC 49, դանակների բռնակները՝ պոլիպրոպիլեն կամ պոլիստիրոլ կամ դրանց համարժեք նյութից: Փաթեթավորումը ստվարաթղթե տուփով, յուրաքանչյուր տուփի մեջ 12 հատ: Տուփերը տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 25 տուփ: Արկղերը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից

		տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
16	դանակներ /Դանակ բանջարեղենի/	Դանակ բանջարեղենի ԳՕՍՏ Ռ 51015-97 դանակի երկարությունը 205-240մմ, կտրող սայրի երկարությունը 100-140մմ, սայրի լայնությունը 15-30մմ, սայրի հաստությունը 0,7-2,2մմ: Մետաղը ՈՒ8Ա մակնիշի: Դանակը հավասարաչափ սրված, սրված անկյունը ոչ ավել 40 աստիճան: Սայրը պետք է օժտված լինի առաձգականությամբ և ունենա կարծրություն ոչ պակաս HRC 49, դանակների բռնակները՝ պոլիպրոպիլեն կամ պոլիստիրոլ կամ համարժեք նյութ: Փաթեթավորումը ստվարաթղթե տուփով, յուրաքանչյուր տուփի մեջ 12 հատ: Տուփերը տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 25 տուփ: Արկղերը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:
17	պատառաքաղներ /Միս հանելու պատառաքաղ չ/պ/	Միս հանելու պատառաքաղ AISI 304 չժանգոտվող պողպատից: Երկարությունը 680մմ+/-5մմ, բռնակի երկարությունը 80մմ +/-2մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 8մմ: Պատառաքաղները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված պատառաքաղները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 20 հատ: Արկղերը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:Գծագիրը կցվում է հավելված 7:
18	թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ /Մթերաթափոքներ ի բաք ցինկապատ կափարիչով/	Մթերաթափոնների բաք ցինկապատ՝ տեսքը սեղանաձև, կափարիչով և բռնակներով: Հիմքի մակերեսը 265-275մմ X245- 255մմ: Վերևի հատվածի մակերեսը 310-320մմ X 300-310մմ, բարձրությունը 500-510մմ: Մետաղի հաստությունը ոչ պակաս 1մմ: Բաքի երկու կողմերից ամրացված բռնակ: Բռնակի լայնությունը 28-35մմ, հաստությունը ոչ պակաս 1մմ, բռնակի եզրային մասից 3-5մմ-ի չափով մետաղը հետ ծալված դեպի հիմքը բռնակի ամրությունը ապահովելու համար: Բռնակի երկարությունը 95-105մմ, բարձրությունը հիմքից դուրս 45-55մմ: Բռնակը հիմքին ամրացված բաքի վերին եզրագծից դեպի ներքև 60-65մմ հեռավորության վրա կենտրոնում ոչ պակաս 4մմ հաստության յուրաքանչյուր կողմում 2 հատ գամերով: Բաքը կափարիչով՝ կափարիչը բաքին միացված 2 ծխնու միջոցով: Կափարիչը նույնպես բռնակով: Մթերաթափոնների բաքի փաթեթավորումը ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 2 հատ: Արկղերը պիտակավորված: Պիտակի չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ, ինչպես նաև սերտիֆիկատ մետաղի բաղադրության վերաբերյալ:

Նշանություն

1. Մատակարարման վայրը՝ ք. Երևան, Սարմի 103:
2. Մատակարարվող ապրանքները չպետք է լինեն նախկինում օգտագործված:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
Կոտայքի մարզ, գյուղ Զովունի
«Արդշինբանկ» ՓԲԸ Նաիրի մ/6
Հ/Հ 2473700214350000
ՀՎՀՀ 03300526
տնօրեն

Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

№	Անվանումը	Չ/Մ	Քանակը	Մատակարարման ենթակա քանակներն՝ ըստ 2017թ. եռամսյակների	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/
				3-րդ եռամսյակ		
1	խոհանոցային սպասք /Շերեփ փոքր ալյումինե/	հատ	3000	3000	620	1860000
2	կաթսաներ /Կաթսա 4լ. ալյումինե առանց կափարիչ/	հատ	500	500	3990	1995000
3	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումինե առանց կափարիչի/	հատ	1008	1008	4190	4223520
4	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումինե առանց կափարիչի/	հատ	1000	1000	4640	4640000
5	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումինե կափարիչով/	հատ	150	150	4990	748500
6	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումինե կափարիչով/	հատ	150	150	5490	823500
7	կաթսաներ /Կաթսա 10լ. ալյումինե կափարիչով/	հատ	150	150	6640	996000
8	կաթսաներ /Կաթսա 20լ. ալյումինե կափարիչով/	հատ	150	150	10990	1648500
9	կաթսաներ /Կաթսա 40լ. ալյումինե կափարիչով/	հատ	150	150	23990	3598500
10	խոհանոցային սպասք /Տակդիր ալյումինե/	հատ	1000	1000	690	690000
11	դույլ, ցինկապատ /Դույլ ցինկապատ/	հատ	201	201	1045	210045
12	խոհանոցային սպասք /Շերեփ խոհարարի ալյումինե /	հատ	76	76	2690	204440
13	խոհանոցային սպասք /Փլավ քամիչ ալյումինե/	հատ	100	100	12990	1299000
14	խոհանոցային սպասք /Քափկիր չ/ա/	հատ	150	150	2290	343500
15	դանակներ /Դանակ <խոհարարի եղյակ>/	հատ	102	102	3490	355980
16	դանակներ /Դանակ բանջարեղենի/	հատ	500	500	1490	745000
17	պատառաքաղներ /Միս հանելու պատառաքաղ չ/ա/	հատ	100	100	3490	349000
18	թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ /Մթերաթափոնների բաք ցինկապատ կափարիչով/	հատ	70	70	33400	2338000
	Ընդամենը	27068485 (քսանյոթ միլիոն վաթսունութ հազար չորս հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ				

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ ռազմաշինամեքենաների պետական ՊԺԿ

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
Կոտայքի մարզ, գյուղ Զովունի
«Արդշինբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 2473700214350000
ՀՎՀՀ 03300526
տնօրեն

Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/68-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV դասակարգումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ*			
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	խոհանոցային սպասք /Շերեփ փոքր ալյումինե/	39221110/19/4/2	1860000	1860000	1860000	1860000
2	կաթսաներ /Կաթսա 4լ. ալյումինե առանց կափարիչ/	44621140/9/4/2	1995000	1995000	1995000	1995000
3	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումինե առանց կափարիչի/	44621140/10/4/2	4223520	4223520	4223520	4223520
4	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումինե առանց կափարիչի/	44621140/11/4/2	4640000	4640000	4640000	4640000
5	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումինե կափարիչով/	44621140/12/4/2	748500	748500	748500	748500
6	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումինե կափարիչով/	44621140/13/4/2	823500	823500	823500	823500
7	կաթսաներ /Կաթսա 10լ. ալյումինե կափարիչով/	44621140/14/4/2	996000	996000	996000	996000
8	կաթսաներ /Կաթսա 20լ. ալյումինե կափարիչով/	44621140/15/4/2	1648500	1648500	1648500	1648500
9	կաթսաներ /Կաթսա 40լ. ալյումինե կափարիչով/	44621140/16/4/2	3598500	3598500	3598500	3598500
10	խոհանոցային սպասք /Տակդիր ալյումինե/	39221110/20/4/2	690000	690000	690000	690000
11	դույլ, ցինկապատ /Դույլ ցինկապատ/	39224332/3/4/2	210045	210045	210045	210045
12	խոհանոցային սպասք /Շերեփ խոհարարի ալյումինե /	39221110/21/4/2	204440	204440	204440	204440
13	խոհանոցային սպասք /Փլավ քամիչ ալյումինե/	39221110/22/4/2	1299000	1299000	1299000	1299000
14	խոհանոցային սպասք /Քափկիր չ/ա/	39221110/23/4/2	343500	343500	343500	343500
15	դանակներ /Դանակ <խոհարարի եռյակ>/	39241100/4/4/2	355980	355980	355980	355980
16	դանակներ /Դանակ քանջարեղենի/	39241100/5/4/2	745000	745000	745000	745000
17	պատառաքաղներ /Միս հանելու պատառաքաղ չ/ա/	39221390/3/4/2	349000	349000	349000	349000
18	թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ /Մթերաթափոքների բաք ցինկապատ կափարիչով/	34921440/1/4/2	2338000	2338000	2338000	2338000

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011120079
ՀՎՀՀ 00867115
ՀՀ պետական եկամուտների նախարարության
ՆՏԱ ռեգիստրացիոն պետի ՊՈԿ

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
Կոտայքի մարզ, գյուղ Զովունի
«Արդշինբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 2473700214350000
ՀՎՀՀ 03300526
տնօրեն

Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 7

ՊԱՏԱՌԱՔԱՂ ՄԻՍ ՀԱՆԵԼՈՒ





Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/68-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՇՀԱՊՁԲ-7/68-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն